զեկեղեցականս հայոց, սկսեալ ի մկրտութենէ մինչեւ վերջին աստիճանն» և այլն։ Քահանայապետական այս լուրջ կարգադրութեան պատճառներն են — ինչպէս կ'իմացուի — առ Ս. Գահ հասած կարգ մը աննպաստ լուրեր, որոնք կասկածի ենթարկած էին Հայ կղերականներէ ոմանց ընդունած Ս. Խորհուրդները և Ձեռնադրութեանց օրինաւորութիւնը։ Աբրահամ կաթողիկոսի կատարած քննութիւնը դժբախտ արդիւնք մը կու տայ յանձին Հայ բարձրաստիճան ծանօթ եկեղեցականի մը՝ Սուքիաս եպիսկոպոսին, որոյ ընդունած Խորհուրդները անվաւեր կը հռչակուին. ըստ այնմ իբր հետեւանք նոր կարգադրութիւններ կ'ըլլան։

Երկրորդ կարեւորութիւն մ'ալ, զոր կը ստանայ մեր վաւերաթուղթը, այն է՝ որ Ս. Քահանայապետը կը պատուիրէ Հռոմ գտնուող բոլոր արեւելեան ազգերուն, որպէս զի ամէնքն ալ իրենց զգեստով և արարողութեամբ կատարեն թէ պատարագը և թէ միւս ամէն եկեղեցական հանդէսները։

Այս լուսամիտ հրահանգը պէտք է նախամուտ նկատենք տասնեակ մը տարի վերջ Բենեդ. ԺԴ.-է հրատարակուած այն հռչակաւոր և յաւերժական յիշատակաց արժանի կոնդակին («Մատուցանե ի ժողով յարգելի եղբարց»)՝ զոր ուղղեց «Առ Միսիո-
«նարս կարգեալս ընդ արեւելս յաղագս պահպանութեան Ծիսից եկեղեցւոյն Յունաց
«և այլոց Արեւելեայց» (հրտր. յամին 1755 Մարտի 13)։ Նախամուտ կոչեցինք, որովհետեւ Ս. Հայրն ինքնին այդ կոնդակը տուած ատեն՝ այսպէս կ'ըսէ. «Զնոյն և մեք
«հեղինակութեամբ մերով հաստատեցաք, շարժեալք մանաւանդ ի վճռոյն եղելոյ
«յայլում նուագի ի ժողովոյ անտի տարածման հաւատոյ, ի 31 յունվարի յամին
«1702. որ յայնմհետէ բազում անգամ հաստատեցաւ և նորոգեցաւ»։

Հանրական Թուղթիս հայերէն Թարգմանութիւնը կատարած և 1755-ին հրատարակած է ի Հռոմ Մխ. Ուխտէս Հ. Վրթանէս Ասկերեան։ Նոյնը երկրորդ անգամ հրատարակուեցաւ 1914-ի ԲԱԶՄԱՎԷՊԻՆ մէջ (տես էջ 379. 417)։

Գերապատուելի և գերյարգելի տեառն իմոյ մեծաւ յարգութեամբ ողջոյն մատուցանեմ

. . . Ներկայ գրիս ոմանս իբս պարտ է ինձ ծանուցանել գերյարգելութեան ձերում, նախ զեռապայծառ Պատրիարգին կողմանէ. նախ յայտ լիցի որ առաջ քան զերկրորդ անգամ անկարծակի սաստկապէս հիւանդանալն իւր, փափն իւրեան իշխանութիւն տվաւ առ ի որոնել և քննել զեպիսկոպոսունս և զեկեղեցականս հայոց ըսկսեալ ի մկրտութենէ մինչև վերջին աստիճան, ո՛ր քաղաք, որո՛ւմ անձէ և որո՛յ աղաքաւ առեալ են զկարքն և այլն. արար զքննութիւնս ամենեցուն. բաց ի միուն զամենեքին օրինապէս առեալ են զկարքսն. և այն մէկն իսկոյն հրամանաւ հայրապետին արքելեցաւ պատարագելոյ և խոստովանանք լսելոյ. եւ զատկին պիտի վերստին օրհնէ, տալով նմայ զամենայն սուրբ աստիճանս. և պատճառն է զի օրհնողն իւր առանց ընդունելոյ զկարգ քահանայութեան եպիսկոպոս եղեալ է. այս բանս հռոմ ամենայն արեւելեան ազգաց յայտնի է, ևս բազում Ֆռանկաց. բայց տեղդ կարծեմ դեռ ևս չէ լսվաց, վասն որոյ խնդրեմ մնացէ ի ներքոյ կնքոյս Ս[ուքիաս] եպիսկոպոս[1]*։*

Եւս յայտ առնեմ զի փափն հրամայեաց ամենայն արեւելեան ազգաց հռոմ եղելոց, զի ամենեքեան իւրեանց ըսկէստիւ և արարողութեամբ առնեն զպատարագն և զայլ եկե-

---

1. *Այս դէպքը կը պատմուի նաեւ Աղաչայ Պետրոսի առ Մխիթար գրած մէկ նամակին մէջն այսպէս. «... զուքիաս եպիսկոպոսն ևս առզիլել են ամմ որ ոչ պատարագ կառէ և ոչ խոստովանութիւն լսէ և թէ զպատճառն կամիս գիտել նայ, ասաց հոգեւոր հայրն թէ ոչ է ձեռնադրեալ, սաուկ այսինքն խալպ և անհաստատ եպիսկոպոս էղել է նայ փոփոր զուքիաս եպիսկոպոսն ձեռնադրած ըլլայ. վասն որոյ առգիլեալ է զաւալլին ...»* (Գր. 1743 Մարտ 23, Հռոմ)։